**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**ՈՐՈՇՈՒՄ N 494**

<<24>> հուլիսի 2023 թվական                                        գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿԻ ԱՐՇԱԿՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 130-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Կարեն Արշակի Արշակյանի դիմումը **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Կարեն Արշակի Արշակյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ 2023 թվականի հուլիսի 24-ին:

2.Կարեն Արշակի Արշակյանի վերջին աշխատանքային օր համարել 2023 թվականի հուլիսի 21-ը:

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝                Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

24 հուլիսի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հուլիսի 2023 թվականի N 495-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ԳՅՈՒՂԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 12 ՀԱՍՑԵԻ 08-037-0023-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Աշոտ Վարդգեսի Խաչատրյանը (ծնված 17/09/1954 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ համասեփականության իրավունքով իրենց ընտանիքին պատկանող 08-037-0023-0007 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,118 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավելի օգտագործվող 0,002088 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ իրենց համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Համասեփականության իրավունքով Աշոտ Վարդգեսի, Մարիամ Սերյոժայի, Մարինե և Վարդգես Աշոտի Խաչատրյաններին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի 3-րդ փողոց, 12 հասցեի հողամասի վրա գտնվող, ինքնակամ կառուցված 119,07 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, 15,52 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով նկուղը և 95,84 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով անասնաշենքը կառուցվել են 1989 թվականին (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը) իսկ 19,95 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը, 1,36 քառակուսի մետր արտաքին մակերեսով զուգարանը և 1,08 քառակուսի մետր մակերեսով պարիսպը կառուցվել են 2013-ից 2020 թվականներին (2001 թվականի մայիսի 15-ից հետո) Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ

պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023XKALDF ծածկագրով:

Քաղաքացիներ՝ Աշոտ Վարդգեսի, Մարիամ Սերյոժայի, Մարինե և Վարդգես Աշոտի Խաչատրյանները փաստացի տիրապետում և օգտագործում են 08-037-0023-0007 կադաստրային ծածկագրով, 0,120088 հեկտար ընդհանուր մակերեսով օրինական և դրան կից ավելի օգտագործվող հողամասը, ինչպես նաև դրա վրա գտնվող ինքնակամ համարվող շենք շինությունները, որոնք օրենքով սահմանված կարգով համարվում են այն ֆիզիկական անձանց սեփականությունը, ովքեր տիրապետում են այդ գույքը՝ որպես սեփական գույք:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի բ) ենթակետի, 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Երազգավորս գյուղի (Շիրակի մարզ, 17-րդ գոտի) համար 0,0743 է, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի 3-րդ փողոց, 12 հասցեի հողամասի վրա 1989 թվականին կառուցված 119,07 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, 15,52 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով նկուղը և 95,84 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական առանց օրինականացման վճարների գանձման:

2. Նույն հողամասի վրա 2013-ից 2020 թվականներին ինքնակամ կառուցված 19,95 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը, 1,36 քառակուսի մետր արտաքին մակերեսով զուգարանը և 1,08 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:

3. Սույն որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված օժանդակ շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 6000 Հայաստանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության 0,0743 գործակիցը: Օժանդակ շինությունների օրինականացման համար հաշվարկված վճարը կազմում է 9982 (ինը հազար ինը հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Ճանաչել Աշոտ Վարդգեսի, Մարիամ Սերյոժայի, Մարինե և Վարդգես Աշոտի Խաչատրյանների համատեղ սեփականության իրավունքը 08-037-0023-0007 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում ներառված, ավելի օգտագործվող 0,002088 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

5. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի համասեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

7. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ձ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«25» հուլիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

## ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հուլիսի 2023 թվականի N 496-Ա

Գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՍԿ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 108 ՀԱՍՑԵԻ 08-092-0015-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Մարլենա Մկրտիչի Էլոյանը (ծնված 01/03/1961 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ համասեփականության իրավունքով իրենց ընտանիքին պատկանող 08-092-0015-0001 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Համասեփականության իրավունքով Սիմոն Խորենի, Մարլենա Մկրտիչի, Լուսինե, Արմենուհի և Հռիփսիմե Սիմոնի Էլոյաններին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ոսկեհասկ գյուղի 1-ին փողոց, 108 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 195,62 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով կիսակառույց բնակելի տունը և բաց պատշգամբը կառուցվել են 1991 թվականին: Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-րդ կետերի պահանջների, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ոսկեհասկ գյուղի 1-ին փողոց, 108 հասցեի հողամասի վրա 1991 թվականին ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 195,62 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով կիսակառույց բնակելի տունը և բաց պատշգամբը ճանաչել օրինական՝ առանց վճարների գանձման:
2. Սահմանված կարգով ինքնակամ կառույցն իրականացրած համասեփականատերերին տրամադրել կիսակառույցն ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համասեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ձ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«25» հուլիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

## ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հուլիսի 2023 թվականի N 497 -Ա

Գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-052-0038-0010, 08-052-0038-0011 ԵՎ 08-052-0038-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կապս բնակավայրի տարածքում գտնող 08-052-0038-0010, 08-052-0038-0011 և 08-052-0038-0012 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի սահմաններում նոր առաջացող 0,17739 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Կապս, 21-րդ փողոց, 5 հողամաս»:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ջ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«25» հուլիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հուլիսի 2023 թվականի թիվ 498 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՋՐԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ԱՆՑՈՒՂԻ 5-ՐԴ ՇԵՆՔ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼ ՄԱՐԻԱՄ ԵՐՎԱՆԴԻ ԱԲՐԵՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՐԵՔ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 235-Ա որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 13 օգոստոսի 2020 թվականի N 1326-Ն որոշմամբ կատարված փոփոխությունը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան բնակավայրի Ջրաշինարարների փողոց, 4-րդ անցուղի, 5-րդ շենք, թիվ 4 համայնքային սեփականություն հանդիսացող երեք սենյականոց բնակարանը՝ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 11042022-08-0039՝ տրված 2022 թվականի մարտի 3-ին), 100,86 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով, ընդհանուր օգտագործման տարածքների և շենքով զբաղեցված հողամասի նկատմամբ բաժնային սեփականության իրավունքով նվիրաբերել Մարիամ Երվանդի Աբրեյանի ընտանիքի երեք անդամներին՝ հետևյալ կազմով՝
   1) ինքը՝ Աբրեյան Մարիամ Երվանդի (ծնված 18/08/1952 թվական),
   2) աղջիկը՝ Մարտիրոսյան Լուսինե Պարույրի (ծնված 19/03/1983 թվական),
   3) թոռնիկը՝ Սարիբեկյան Աննա Արմենի (ծնված 24/11/2004 թվական),

2. Սույն որոշման 1-ին կետով նվիրաբերված գույքը դուրս գրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի գույքացանկից:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները պետական գրանցման նպատակով ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ձ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«25» հուլիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

**ՈՐՈՇՈՒՄ N 499 – Ա**

26 հուլիսի 2023 թվական

գյուղ Ախուրյան

ԲԱՑԱՌԻԿ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԵՆԻԱՄԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 4 ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՐԱՆՇ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 1244-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի 883., 883.12., 883.51., 883.82 կետերը և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 04-ի թիվ 78-Ա որոշման 3-րդ կետի պահանջների,

**Որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող, բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված, Բենիամին բնակավայրի տարածքում գտնվող 4 կտոր հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարել Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով օտարվող հողամասերի նկատմամբ իրավունքների փոխանցման նպատակով Հայաստանի Հանրապետության անունից, որպես ձեռք բերող հանդես եկող «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հետ կնքել հողամասերի առուվաճառքի պայմանագրեր:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ջ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

26 հուլիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
ղեկավարի 2023 թվականի հուլիսի 26-ի 499-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող, Բենիամին բնակավայրի տարածքում գտնվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի շրջանակներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված հողամասերի ցանկը

| Հ/Հ | Գերակա շահ ճանաչված հողամասի ծածկագիրը | Նպատակային նշանակությունը | Առանձնացվող հողամասի ծածկագիրը | Օտարվող հողամասի մակերեսը (քառակուսի մետր) | Փոխհատուցման գումարը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | 08-027-0585-0001 | Բնակավայրերի | 08-027-0585-0001 | 0,001259 | **3 185** |
| 2. | 08-027-0112-0124 | Գյուղատնտեսական | 08-027-0112-0124 | 0,069837 | **963 751** |
| 3. | 08-027-0130-0001 | Գյուղատնտեսական | 08-027-0130-0001 | 0,007427 | **49 538** |
| 4. | 08-027-0110-0033 | Բնակավայրերի | 08-027-0110-0033 | 0,433822 | **11 474 592** |
| | Ընդամենը | | | 0,512345 | **12 491 066** |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**ՈՐՈՇՈՒՄ N 500– Ա**

26 հուլիսի 2023 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 24-րդ կետերի, 65-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 7-ի թիվ 02-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 108-րդ և 109-րդ կետերի դրույթներով՝

**Որոշում եմ՝**

1. 2023 թվականի օգոստոսի 1-ին, ժամը 12:00-ին հրավիրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու արտահերթ նիստ:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի նախագիծը՝ համաձայն հավելվածի:
3. Արտահերթ նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը, օրենքով սահմանված ժամկետում տրամադրել ավագանու անդամներին և տեղադրել համայնքի պաշտոնական կայքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ձ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

26 հուլիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ШИРАКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ
AKHURYAN MUNICIPALITY RA SHIRAK REGION

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
ղեկավարի 2023 թվականի
հուլիսի 26-ի թիվ 500– Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 1-ի արտահերթ՝ իններորդ նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքում 2024 թվականին իրականացվելիք տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերին համաձայնություն տալու մասին

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆիզկուլտուրայի դահլիճի վերանորոգման համար «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպությանը գումար տրամադրելու մասին

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կրաշեն բնակավայրի 3-րդ փողոց 3-րդ շենք հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող կառույցի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար որպես համայնքային ներդրում գումար տրամադրելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 04-ի թիվ 77-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրում խաղահրապարակ կառուցելու աշխատանքներին մասնակցելու համար որպես համայնքային ներդրում գումար տրամադրելու մասին

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2023 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 128-Ա, սեպտեմբերի 15-ի թիվ 155-Ա և հոկտեմբերի 14-ի թիվ 180-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին

9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 28-ի թիվ 110-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-077-0007-0004 և 08-077-0007-0005 կադաստրային ծածկագրերով հողամասերում քաղաքացի Քարմիլե Խաչատուրի Գևորգյանի կողմից ինքնակամ կառուցված օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին

11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով մրցութային կարգով օգտագործման տրամադրելու և պայմանները սահմանելու մասին

12. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում Կապս բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 08-052-0003-0001 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

13. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-020-0135-0011 կադաստրային ծածկագրով հողամասում քաղաքացի Շուշանիկ Ներսեսի Գևորգյանի կողմից ինքնակամ կառուցված օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված պահեստը և դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին

14. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-007-0627-0045 կադաստրային ծածկագրով հողամասում «ԼԱՕ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ինքնակամ կառուցված օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված հասարակական նշանակության ավտոլվացման կետը և դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը գնման նախապատվության

իրավունքով ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին

15. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում Կրաշեն բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 08-057-0203-0057 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

16. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարվող հողամասից Լիլիթ Հրահատի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող հասարակական կառուցապատման հողամասի ընդլայնման համար անհրաժեշտ հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

17. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում Ախուրյան բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 08-007-0176-0022 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

18. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում Բասեն բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում համայնքի սեփականություն հանդիսացող 30,0 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը հատուկ նշանակության հողերի կատեգորիայի ռազմական գործառնական նշանակության կատարված փոփոխությունը հաստատելու և այն Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին

19. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարվող Ազատան գյուղի 50-րդ փողոց, 2/2 հասցեի հողամասն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու օտարման մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին

20. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-084-0106-0059 կադաստրային ծածկագրով հողամասում քաղաքացի Մանիկ Գագիկի Հովհաննիսյանի կողմից ինքնակամ կառուցված օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված կերախոհանոցը և դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու

մասին

21. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի թվով 26 սոցիալապես անապահով ընտանիքների անդամների դրամական օգնության վերաբերյալ դիմումների քննարկման մասին

22. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի շենքի երկրորդ հարկի միջանցքի տարածքում սպասարկման սենյակի կառուցման» շինարարական աշխատանքների գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

23. « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի համայնքի Ախուրյան բնակավայրի Ջրաշինարարների բանավան 6-րդ փողոցի տուֆ քարով սալապատման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրի գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 հուլիսի 2023 թվականի N 501-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄՈ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑ 14 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ, 28-րդ, 30-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի 3.2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված ցանկի 4-րդ կետի դասակարգումները և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կամո բնակավայրի 15-րդ փողոց, 14 հասցեի անշարժ գույքի սեփականատեր Սամվել Վարազդատի Պետրոսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կամո բնակավայրի 15-րդ փողոց, 14 հասցեի, 08-051-0031-0002 կադաստրային ծածկագրով 0,37352 հեկտար մակերեսով հողամասի վրա գտնվող, հողամասի հատակագծում թիվ 6 համարակալմամբ 27,55 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան մասի գործառնական նշանակությունը փոխել օժանդակ շինության գործառնական նշանակության:
2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ձ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«26» հուլիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

**ՈՐՈՇՈՒՄ** N 502– Ա

27 հուլիսի 2023 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետի 10-րդ ենթակետի «բ» պարբերության և 11-րդ ենթակետի դրույթներով՝

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշենի արվեստի դպրոց» և «Ոսկեհասկի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցակցվող մրցույթի մրցութային հանձնաժողովների անդամության թեկնածուներ առաջադրել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներին՝ համաձայն թիվ 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներին՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

27 հուլիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի
2023 թվականի հուլիսի 27-ի
N 502-Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշենի արվեստի դպրոց» և «Ոսկեհասկի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցակցվող մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամության թեկնածուների

| Հ/հ | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | պաշտոնը | դասային աստիճանը/կոչում/ | բնակության վայրը | հեռախոսահամար-ները (աշխատանքային, բջջային) | էլեկտրոնային փոստի հասցեն |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հարությունյան Ռուբեն Պայքարի | Ախուրյան համայնքի ղեկավարի խորհրդական | քաղաքացիական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Իսահակյան փողոց, տուն 8 | 094 010107 | rub.gov@mail.ru |
| 2. | Աբրահամյան Սուրեն Վահրամի | Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար | համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Շիրակի խճուղի, տուն 4 | 093 065027 | Vahramik2013@mail.ru |
| 3. | Մաթևոսյան Գեղամ Վաչագանի | Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ | Արդարադատության փոխգնդապետ | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Չարենցի փողոց, տուն 1 | 077 051005 | gegham.matevosyan77@mail.ru |
| 4. | Խաչատրյան Մարինե Մխիթարի | Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ | համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Ախուրյանի Խճղ. 4 անցում, 12 | 094 750861 | marine.xachatryan67@mail.ru |
| 5. | Մինասյան Ալինա Արամի | Ախուրյան համայնքի ղեկավարի տեղակալի օգնական | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Հ. Շահբազյան , փողոց, տուն 10 | 098410423 | alinaminassian1991@mail.ru |

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի
2023 թվականի հուլիսի 27-ի
թիվ 502 -Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու ներկայացուցիչներ հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշենի Հենրիկ Սերոբյանի անվան մանկապարտեզ», «Քեթիի մանկապարտեզ», «Ջաջուռի մանկապարտեզ», «Ոսկեհասկի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցակցվող մրցույթի մրցութային հանձնաժողովների անդամության թեկնածուների

| Հ/հ | թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը | պաշտոնը | դասային աստիճանը | բնակության վայրը | հեռախոսա-համարները (աշխատանքային, բջջային) | էլեկտրոնային փոստի հասցեն |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Իգիթյան Արծրունի Ներսեսի | համայնքի ղեկավար | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Ախուրյանի խճուղի 25 | 094 823010 | a.igityan@mail.ru |
| 2 | Խաչատրյան Էդգար Մանվելի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Ջրաշինարարների փողոց11 Շենք, 15 | 095 814966 | edgarxachatryan@mail.ru |
| 3 | Մկրտչյան Անի Գնելի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան,Ախուրյանի խճուղի, 3-րդ փակուղի, տուն 2 | 077 348710 | ani.mkrtchyan2015@mail.ru |
| 4 | Չալոյան Արիստակես Հելբերդի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Այգաբաց 9-րդ փողոց, տուն 12 | 094 927380 | chaloyanaristakes@gmail.com |
| 5 | Մկրտչյան Գարեգին Լեռնիկի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Վահրամաբերդ 5-րդ փողոց, տուն 4 | 0771755536 | garegin29@list.ru |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6 | Մանուկյան Ազնիվ Ավետիքի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Պ. Սևակ փողոց, 4-րդ անցում, տուն 10 | 094 113240 | anahitsergoyan9@gmail.com |
| 7 | Հովհաննիսյան Սամսոն Գագիկի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Ախուրյանի խճուղի, 3-րդ փակուղի, տուն 4 | 098 850388 | sam768-78@mail.ru |
| 8 | Մքոյան Արամայիս Ռազմիկի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Արևիկ, 6/2 փողոց, տուն 2 | 093 382979 | aram.mqoyan@inbox.ru |
| 9 | Արշակյան Կարեն Արշակի | համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Մարմաշեն, 3-րդ փողոց, տուն 8 | 098 799775 | marmashen.shirak@mail.ru |
| 10 | Գևորգյան Համլետ Գագիկի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Վահրամաբերդ, 8-րդ փողոց, տուն 1 | 093 234598 | gevorgyan.hamlet.77@mail.ru |
| 11 | Դրմեյան Արտաշես Սամվելի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Կամո, 3-րդ փողոց, տուն 7 | 077 154515 | artashdrmeyan84@mail.ru |
| 12 | Առաքելյան Հասմիկ Վահանի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Մարմաշեն, 37-րդ փողոց, տուն 14 | 094 716707 | 628133@mail.ru |
| 13 | Առաքելյան Մանուկ Գուրգենի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Կապս, Կապսի մայրուղի, տուն 9 | 055 660608 | manuk.araqelyan.18@mail.ru |
| 14 | Գրիգորյան Սիլվա Մարտինի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ջաջուռ, 1-ին փողոց, տուն 42 | 077 502566 | silva- grigoryan@internet.ru |
| 15 | Այվազյան Ալբերտ Վարդգեսի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Առափի 2-րդ փողոց, տուն 35 | 091 236114 | ajvazyan57@mail.ru |
| 16 | Մանուկյան Զավեն Աշոտի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Ջրաշինարարների բանավան 10-րդ փողոց, տուն 2 | 094 037744 | manukyanzaven108@gmail.com |
| 17 | Նավոյան Հասմիկ Արտաշեսի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ազատան, 30-րդ փողոց, տուն 3 | 093 128970 | hasmik.navwyan111@mail.ru |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 18 | Ներսիսյան Կարեն Հրանտի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Հացիկ, 6-րդ փողոց, տուն 23 | 091 34 3800 | karen.nersisyan.7099@mail.ru |
| 19 | Մաթոսյան Մարտիկ Հովհաննեսի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Արևիկ, 5-րդ փողոց, տուն 25 | 055 111172 | martikmatosyan@gmail.com |
| 20 | Եղիազարյան Շամիրամ Նիկոլի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Առափի, 1-ին փողոց, տուն 100 | 098 491397 | eshamiram@gmail.com |
| 21 | Արշակյան Վասյա Ասպուրակի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ոսկեհասկ, 13-րդ փողոց, տուն 2 | 093 626335 | arshakyan.vasya@mail.ru |
| 22 | Անտոնյան Ֆրունզե Միքայելի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Վ. Տերյան փողոց, տուն 3 | 044 242444 | frunz.exnikner@gmail.com |
| 23 | Մուշեղյան Նարինե Կառլենի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Կոմիտասի փողոց, 1-ին շենք, բնակարան 4 | 077 965359 | narine.mu@inbox.ru |
| 24 | Ոսկանյան Հակոբ Ահարոնի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ջրառատ, 6-րդ փողոց, տուն 4 | 093 070087 | hak-voskanyan9@mail.ru |
| 25 | Հովհաննիսյան Վաչագան Վոլոդիայի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ջրառատ, 16-րդ փողոց, տուն 11 | 098 701157 | vachaganhovhannisyan91 @gmail.com |
| 26 | Սուվարյան Թամարա Արմենակի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Ջաջուռ, 6-րդ փողոց, տուն 20 | 093 165774 | suvaryan.tamara62@mail.ru |
| 27 | Մնացյան Մհեր Միսակի | ավագանու անդամ | - | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Բասեն, 7-րդ փողոց, 2-րդ փակուղի, տուն 26 | 094 155682 | mher.mnacyan.1967@mail.ru |